# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 252-Ա
25.-X-.2017թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 90 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՈՒԽԱՆ ԳՅՈՒՂԻ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոց>> պետական հիմնարկը վերակազմակերպելու և <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 90 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը:
3. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Գագիկի Բալասանյանին՝ ապահովել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ